

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2021 թվականի մայիսի 13-ի N 754-Ն որոշման մեջ
փոփոխություն կատարելու մասին»
Կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

--ը 2023 թվականի N ----Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 13-Ի N 754-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի «Օգոսային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման ընդհանուր չափաքանակները (քվոտաները) սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 15-ի N 327-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 754-Ն որոշման հավելվածի 3-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«3. Սահմանվում են օգոսային շերտը քայքայող նյութերի և հիդրոֆտորածխածինների ներմուծման հետևյալ տարեկան ընդհանուր չափաքանակները (քվոտաները)՝

Օգոնային շերտը քայքայող նյութերի խումբը	Տարին	Ներմուծման առավելագույն չափաքանակը (մետրիկ տոննա/տարի)
Անվանացանկ A-ի խումբ I, II Անվանացանկ B-ի խումբ I, II, III	2011 թ.-ից սկսած	0
Անվանացանկ C-ի խումբ II, III		
Անվանացանկ E-ի խումբ I Անվանացանկ C-ի խումբ I	2020-2021 թթ. 2022-2024 թթ. 2025-2029 թթ. 2030-2039 թթ. 2040 թ.-ից սկսած	82,35 42,31 41,17 3,17 0
Հիդրոֆտորածխածիններ խումբը	Տարին	Ներմուծման առավելագույն չափաքանակը (տոննա/տարի) համարժեքով/տարի) անսահմանափակ
Անվանացանկ F-ի խումբ I, II	2020-2023 թթ. 2024 - 2028 թթ. 2029 - 2034 թթ. 2035 - 2039 թթ. 2040 - 2044 թթ. 2045թթ.-ից սկսած	475,254 427,729 332,678 237,627 95,051
»:		

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրվանից: